Մ. Գ. Մանուչարյան

Ելույթ

«Նորարարական զարգացման հիմնախնդիրները ՀՀ գյուղատնտեսության ոլորտում»

Անհնար է ժամանակակից աշխարհը պատկերացնել ինչպես արդեն գոյություն ունեցող, այնպես էլ՝ ապագա նորարարությունների, որը համաշխարհային հանրությանը տանում է դեպի զարգացման ավելի բարձր փուլ: Նորարարությունները կարևոր օղակ են դարձել տնտեսության բոլոր ոլորտների համար և դարձել են տնտեսական և սոցիալական զարացման հիմնական շարժիչ ուժը: Վերջին տասնամյակների իրադարձությունները ցույց են տալիս, որ այն երկրները, որոնք ստեղծել են գիտության և տեխնոլոգիայի արագ զարգացման մեխանիզմներ և մտել են գիտատեխնիկական հեղափոխության նոր փուլ, ապահովել են տնտեսական և սոցիալական առաջընթացի բարձր տեմպեր:

«Նորարարական զարգացման հիմնախնդիրները ՀՀ գյուղատնտեսության ոլորտում» թեմայի շրջանակներում (ղեկ.՝ տ.գ.թ., դոցենտ Մ. Գ. Մանուչարյան) վերլուծվել են նորարարությունների տեղը, դերը և նշանակությունը ՀՀ սոցիալ-տնտեսական զարգացման գործում, ՀՀ ագրարոպարենային համակարգում նորարարությունների անհրաժեշտությունը, հիմնախնդիրները և դրանց հաղթահարման ուղիները, գյուղատնտեսական ոլորտի նորարարական զարգացման առանձնահատկությունները, մոդելները և արտասահմանյան փորձը, ՀՀ նորարարական ներուժի դերը տնտեսական աճի ապահովման գործում, նորարարական ներուժի գնահատմանն ու զարգացմանը խոչընդոտող գործոնները, նորարարական տնտեսության ձևավորման միտումները և առկա խնդիրները, գյուղատնտեսական ոլորտի նորարարական զարգացման մեխանիզմերը և այլն:

ՀՀ գյուղատնտեսության ոլորտի նորարարական ներուժի համակողմանի գնահատմամբ բացահայտվել են դրա ներդրման և նորարարությունների առևտրայնացման հիմնական ուղղությունները: Բացահայտվել են, որ ՀՀ գյուղատնտեսության ոլորտի զարգացման հիմնական խոչընդոտները հնացած հիմնական միջոցները և տեխնոլոգիաներն են, որի պատճառով ոլորտի նորարարական զարգացման նպատակահարմարությունը պայմանավորված է այն հանգամանքով, որ ներկա պայմաններում գրեթե բոլոր ռեսուրսները սահմանափակ են, և առաջանում է ռեսուրսախնայողություն: Ի դեպ, պետք է նշել, որ ոլորտը շարունակում է զարգանալ մեծապես էքստենսիվ ճանապարհով: Ներկայումս ոլորտի ներդրումային ակտիվությունը գտնվում է շատ ցածր մակարդակի

վրա, ինչը պայմանավորված է ինչպես ողջ տնտեսության այնպես էլ առանձին մարզերի ցածր տնտեսական վիճակով:

Ուսումնասիրության արդյունքում առաջարկվել է ստեղծել նախապայմաններ, որպեսզի գյուղատնտեսության ոլորտի նորարարությունները հասանելի լինեն ոչ միայն հարուստ ֆերմերներին, այլև՝ միջին և ցածր եկամուտ ունեցող գյուղացիական տնտեսություններին, որոնք ավելի մեծ տեսակարար կշիռ են կազմում ՀՀ-ում: Այս պարագայում անհրաժեշտ է կիրառել արտասահմանյան փորձը և գյուղատնտեսության նորարարական նախագծի արժեքի 50 %-ի չափով տալ պետական երաշխավորություն, ինչը նաև կհանգեցնի ոլորտի ռիսկայնության մակարդակի նվազեցմանը: Համագործակցության, կապերի հաստատման և ամրապնդման նպատակով (ներդրողներ, ֆերմերներ) անհրաժեշտ է ստեղծել վեբ-հարթակներ, ինչպես նաև կազմակերպել ցուցահանդեսներ: Նորարարական զարգացման պայմաններում ավելի է կարևորվում տնտեսություն և գիտություն կապի ամրապնդումը, և նրանք պետք է գործեն միասնական գործընկերության մթնոլորտում, որպեսզի հնարավոր լինի ապահովել բարձր արդյունավետություն:

Իսկ այժմ ներկայացնում եմ իմ և իմ թիմի գիտական հրապարակումները 2020թ.

№	Թեմայի կատարողներ		Հրապարակումներ		
			Հոդվածներ		գրքեր
			արտասահ-մանյան	տեղական	
1.	**Թեմայի ղեկավար՝**	տ.գ.թ., դոցենտ ավագ գիտաշխատող Մ.Գ. Մանուչարյան	11	1	1
	Կատարողներ՝				
2.		գիտաշխատող, Լ.Ս. Ազատյան	10	1	-
3.		տնտեսագետ, Մ.Հ. Մուրադյան	9	1	-
4.		տ.գ.թ.,կրտսեր գիտաշխատող, Գ.Վ. Ոսկանյան (սեպտեմբերից)	1	1	-
	Ընդամենը		***31***	***4***	***1***